

ՀԱՄԱՌՈՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1908 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20.—Բուխարեստում ծնվեց Կարապետ Աբրահամի Պալճյանը (հետագայում՝ Նորին Սուրբ Օծություն, Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Ամենայն Հայոց, Տ. Տ. Վազգեն Ա.): Հայրը՝ Աբրահամ Կարապետի Պալճյան, մասնագիտությամբ կոշկակար, մայրը՝ Սիրանույշ Մարգարի Պալճյան (մինչև ամուսնությունը՝ Մարգարյան), ուսուցչուհի:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23.—Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցում, Հարություն քահանա Սարգսյանի ձեռքով, կատարվում է Կարապետ Պալճյանի մկրտությունը: Մկրտվողին տրվում է նաև երկրորդ՝ «Լևոն» անունը:

1916 թ. ՁՄԵՌ.—Աբրահամ և Սիրանույշ Պալճյանները, իրենց որդու հետ միասին, պատերազմի ընթացքում, ի թիվս ռումինահայ բազմաթիվ ընտանիքների, դուրս են գալիս Բուխարեստից և հաստատվում են Օդեսայում:

1917 թ. ՍԿԻԶԲ.—Օդեսայում, Լևոն—Կարապետ Պալճյանը սկսում է հաճախել արձակագիր Արմեն Շիտանյանի տնօրինության ներքո գտնվող հայկական նախակրթական դասընթացներին: Տանը, մասնավոր կարգով, նրան դասեր էր տալիս ուսուցիչ և մտավորական Աշոտ Սպանդարյանը:

1919 թ. ԳԱՐՈՒՆ.—Պատերազմի ավարտին, Պալճյանների ընտանիքը թողնելով Օդեսան, վերադառնում է Ռումինիա և վերահաստատվում Բուխարեստում:

1920 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Լևոն—Կարապետ Պալճյանը ընդունվում է գերմանական նախակրթարան «Եվանգելիշե շուլեի» («Evangelische Schüle») չորրորդ դասարանը: Այստեղ սովորում է չորս տարի:

1922 թ. մինչև 1936 թվականը Լևոն-Կարապետ Պալճյանը գործոն մասնակցություն է ունեցել Հ. Մ. Ը. Մ.-ի սկաուտական կազմակերպության և այլ մշակութային ձեռնարկների իրագործմանը:

1924 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Սկսում է հաճախել Բուխարեստի «Առևտրական բարձրագույն վարժարանը»: Ուսումնառությունը տևում է չորս տարի:

1929 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Աշխատանքի է անցնում Բուխարեստի հայկական «Միսաքյան—Քեսիմյան» ազգային վարժարանում որպես օգնական ուսուցիչ և քարտուղար:

1932 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Մանկավարժական գործունեությանը զուգահեռ, ուսանող է արձանագրվում Բուխարեստի Պետական Համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետում:

1933 թ. ՄԱՐՏԻ 19.—Փարիզում հրատարակվող «Մարտկոց» թերթում (№ 73), հրատարակում է իր առաջին՝ «Նոր սերունդին համար» հոդվածը: Գրական-հրապարակախոսական գործունեության սկիզբը:

1936 թ. ՓԵՏՐՎԱՐ.—Համալսարանը ավարտում է, պաշտպանելով «Կարգապահության հարցը մանկավարժության մեջ» խորագրով իր ուսումնասիրությունը:

1936 թ. ՄԱՐՏ.—Սկսում է հաճախել Բուխարեստի Պետական Համալսարանին կից՝ Տիտու Մայորեսկուի անվան փորձառական մանկավարժության ինստիտուտը, որն ավարտում է մեկ տարվա ընթացքում:

1937 թ. ՀՈՒՆԻՍ.—Բուխարեստում, Լևոն—Կարապետ Պալճյանի խմբագրությամբ, սկսում է հրատարակվել «Հերկ» գիտական-մշակութային և հասարակական արևմտահայերեն ամսագիրը, որտեղ նա հանդես է գալիս բազմաթիվ խմբագրականներով և հոդվածներով: Տասներկու համարից հետո, 1938 թ. մայիսին, «Հերկը» դադարում է:

1938 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ.—Բուխարեստում հրատարակվող «Գաղութահայ տարեգրքում» (խմբ. Հայր Մ. Պոտուրյան), լույս է ընծայում «Անձնավորության գաղափարի մասին (մտածումներ)» պատմա-փիլիսոփայական ուսումնասիրությունը «Կ. Պալճյան» ստորագրությամբ:

1940 թ.—Բուխարեստում, արևմտահայերեն, հրատարակվում է Կարապետ Պալճյանի «Մուսա լերան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ (վերլուծական փորձ)» ուսումնասիրությունը: 62 էջ: Նույնը՝ Մ. Դարբինյան—Մելիքյանի ռուսերեն համառոտ թարգմանությամբ, «Дружба народов», 1987, № 8, և ֆրանսերեն առանձին գրքով, Փարիզ, 1987, 43 էջ: Նույնը հատվածաբար, Փարիզի «Հառաջ» օրաթերթում, 1987 թ. օգոստոսի 7-ից (№ 16, 546) սկսած:

1942 թ.—Բուխարեստի հայկական համայնքի նախաձեռնությամբ, ստեղծվում է Ռումինիայում գտնվող հայ ռազմագերիներին օգնող կոմիտե, որի կազմում ընդգրկված էր նաև Լևոն—Կարապետ Պալճյանը: Կոմիտեն գոյություն ունեցավ մինչև 1944 թ. օգոստոսի 23-ը:

1942 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 23.—Ռումինահայ թեմի առաջնորդ Հուսիկ Արքեպիսկոպոս Զոհրապյանի մահը Բուխարեստում (ծնվ. 1871 թ. Նոր-Նուսխիջևանի Մեծ Սալա գյուղում):

1943 թ. ԿԵՍԵՐ.—Հոգևորական գործունեության անցնելու նպատակով, Լևոն—Կարապետ Պալճյանը ազատվում է «Մխսաքյան—Քեսիմյան» ազգային վարժարանի ուսուցչի պարտականություններից:

1943 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20.—Ռումինահայ թեմական խորհրդի առաջադրանքով, ուղևորվում է Աթենք, ընկերակցությամբ Բուխարեստի հայոց եկեղեցու ավագերեց Տ. Իգնատիոս ավագ քահանա Քիլիմյանի, հոգևորական կոչում ստանալու համար:

1943 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29—30.—Աթենքում, հայոց «Ս. Կարապետ» եկեղեցում, հունահայ թեմի առաջնորդ Կարապետ Արքեպիսկոպոս Մուզլըմյանի ձեռքով, կատարվում է Լևոն—Կարապետ Պալճյանի կուսակրոն քահանայության ձեռնադրությունը, վերանվանվելով **Տեր Վազգեն վարդապետ**:

1943 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16.—Սուչավայում (Հյուս. Ռումինիա), «Սուրբ Հաճկատար» հայկական վանքում, նորընծա վարդապետը անց է կացնում կանոնական քառասունքը, որը տևում է մինչև նոյեմբերի 25-ը:

1943 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 28.—Բուխարեստի «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցում, «ծովածավալ բազմության առջև» Տ. Վազգեն վարդապետը մա-

տուցում է պատարագ, բնաբան ունենալով «Տէր, եթէ զշրթունս իմ բանաս...» կարգախոսը: Նույն օրը, հետ պատարագի Բուխարեստի հայոց թեմական պատգամավորական ժողովը, Վազգեն վարդապետ Պալճյանին ընտրում է թեմի առաջնորդական տեղապահ: Դեկտեմբերի 21-ին, այդ ընտրությունը վավերացնում է Ռումինական կառավարությունը:

1943 թ. ՆՈՅԵՄԲԵՐ.—Աստվածաբանական գիտելիքները խորացնելու նպատակով, ուսանող է արձանագրվում Բուխարեստի պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետում: Ուսումնառությունը տևում է երկու տարի:

ՏԱՐԵՎԵՐՋ.—Բուխարեստում, արևմտահայերեն, հրատարակվում է Կարապետ Պալճյանի «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» տեսական-մանկավարժական աշխատությունը: 155 էջ: Նույնը անփոփոխ՝ Նյու-Յորք, 1987 թ.:

1944 թ. ՕԳՈՍՏՈՍԻ 23.—Ուկրաինական երկրորդ ռազմաճակատի զորամասերը, Ռումինական առաջին կամավորական դիվիզիայի հետ համատեղ, մտնում են Բուխարեստ: Ռումինիան ազատվում է ֆաշիզմի լծից:

1945 թ. ՀՈՒՆԻՍԻ 6.—Առաջին այցելությունը հայրենիք, որպես թեմի պատվիրակության ղեկավար: Հունիսի 10-ին, Մայր Աթոռում, ընդունելություն Կաթողիկոս Գեորգ Զորեքչյանի մոտ: Եռանդուն մասնակցություն Համազգային-Եկեղեցական ժողովի աշխատանքներին: Վերադարձ Բուխարեստ՝ հուլիսի 5-ին:

1945 թ.—Բուխարեստում, արևմտահայերեն, հրատարակվում է Վազգեն վարդապետ Պալճյանի «Մեր պատարագը» կրոնագիտական աշխատությունը: 104 էջ:

1947 թ. ՀՈՒՆԻՍԻ 8.—Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի սրբազանի այցելությունը Բուխարեստի հայկական «Սուրբ Հրեշտակապետք» եկեղեցին: Բազմահարյուր հայերի ներկայությամբ բարձրաստիճան հյուրին ընդունում և բարի գալուստի խոսքով դիմավորում է թեմի առաջնորդական տեղապահ Տ. Վազգեն Պալճյանը:

1948 թ. ՄԱՅԻՍԻ 20.—Այցելություն Խորհրդային Հայաստան, հաջորդ օրը՝ ընդունելություն Գեորգ կաթողիկոս Զորեքչյանի մոտ: Մայիսի 28-ին, Մայր Տաճարում, վարդապետական Ծայրագունության աստիճանների տրվչություն Կաթողիկոսի ձեռքով: Մեկնում Երևանից հունիսի 6-ին:

1948 թ. ՀՈՒԼԻՍԻ 25.—Ռումինահայ թեմական պատգամավորական ժողովը Վազգեն Ծայրագույն վարդապետ Պալճյանին ընտրում է թեմի առաջնորդ: Ռումինական կառավարությունն ընտրությունը վավերացնում է նոյեմբերի 27-ին:

1950 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 16.—Այլ դավանությունների առաջնորդների հետ, Բուխարեստում, ստորագրում է Աշխարհի խաղաղության պաշտպանության ուղերձը, որն ուղարկվում է Վարշավայի՝ Խաղաղության կողմնակիցների երկրորդ կոնգրեսին:

1951 թ. ՄԱՅԻՍԻ 20.—Այցելություն Մայր Հայրենիք: Հուլիսի 8-ին, Էջմիածնի Մայր Տաճարում, Տ. Տ. Գեորգ Զ. Կաթողիկոսը եպիսկոպոս է ձեռնադրում Տ. Վազգեն Ծայրագույն վարդապետին: Մեկնում Երևանից, օգոստոսի 8-ին:

1952 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7.—Ընտրվում է Ռումինական Ժողովրդական Հանրապետության՝ Խաղաղության պաշտպանության Մշտական կոմիտեի անդամ և պարգևատրվում է «Հանրապետության Աստղ» շքանշանով:

1953 թ. ՄԱՅԻՍԻ 22.—Չորրորդ այցելությունը Մայր Հայրենիք: Մեկնում Երևանից՝ հուլիսի 1-ին:

1954 թ. ՄԱՅԻՍԻ 9.—Մայր Աթոռ Ս. Էջմիածնում վախճանվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գեորգ Զ. Չորեքչյանը: (Ծնվ. 1868 թ. նոյեմբերի 2-ին, Նոր Նախիջևանում):

1954 թ. ՄԱՅԻՍԻ 23.—Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ժամանում է Երևան, վախճանյալ կաթողիկոսի հուղարկավորության ազահանդեսին մասնակցելու համար: Մայիսի 27-ին, հանդես է գալիս «Հայ Եկեղեցվո անփոխարինելի կորուստը» դամբանականով, հունիսին՝ ռադիոելույթով: Մեկնում Երևանից հունիսի 12-ին:

1954 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18.—Հրավիրվում է Երևան, Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստերին մասնակցելու համար: Հովվական այցելություն Լենինականի, Թբիլիսիի, Բաքվի և Կիրովաբադի հայոց եկեղեցիներին: Մեկնում Երևանից՝ 1955 թ. փետրվարի 26-ին:

1954 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31.—Գերագույն Հոգևոր Խորհրդի որոշմամբ, Վազգեն եպիսկոպոսը ստանձնում է նաև Բուլղարահայ թեմի առաջնորդի պարտականությունները:

1954 թ.—Բուխարեստում, արևմտահայերեն, հրատարակվում է Վազգեն եպիսկոպոսի (ի՛մա. Պալճյան) «Հայրենի արևին տակ» ուղեգրական աշխատությունը: 112 էջ:

1955 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23.—Երևան է ժամանում Ռումինահայ և Բուլղարահայ թեմերի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը, մասնակցելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրության՝ Ազգային-Եկեղեցական Ժողովի աշխատանքներին:

1955 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30.—Ազգային-Եկեղեցական Սրբազումար ժողովի երկրորդ նիստում, քվեից բացարձակ առավելությամբ (125 կողմ: Մյուս թեկնածուն՝ Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանը, ստացել էր 6 կողմ) Տ. Վազգեն եպիսկոպոս Պալճյանը ընտրվում է Ամենայն Հայոց Կաթողիկոս:

1955 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5—15.—Վազգեն Ա. Կաթողիկոսի ընտրությունը շնորհավորող հեռագրեր Ի. Պոլյանսկուց (Սովետական Միության՝ Կրոնից Խորհրդի նախագահ), Հր. Գրիգորյանից (Հայաստանի կառավարության անունից), Ռումինական Ժողովրդական Հանրապետության՝ Ազգային ժողովի նախագահ Պետրու Գրոզայից, Ռումինիայի պատրիարք Ժուստինյանից, Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսիից, Համայն վրաց Պատրիարք-Կաթողիկոս Մելքիսեդեկից, Համայն Անգլիո եպիսկոպոսապետ Ջեոֆրիից, Բուլղարիայի պատրիարք Կիրիլից, Անդրկովկասի Մուսուլմանների հոգևոր վարչության նախագահ Շեյխ Ուլ-Իսլամ Ակիմովից և ուրիշներից:

1955 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ.— Ռումինական «Օրթոդոքսիա» ամսագիրը հրատարակում է Վազգեն Կաթողիկոս Պալճյանի «Սուրբ Գրիգոր Նարեկացու կյանքն ու գործը» («Viata Si opera Sfintului Grigore din Nareg») ռումիներեն ուսումնասիրությունը, որին հաջորդում է «Մատեան Ողբերգութեան» վեց գլուխների ռումիներեն թարգմանությունը:

1955 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6.—Էջմիածնի Մայր Տաճարում, Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.-ն, կատարում է առաջին եպիսկոպոսական ձեռնադրությունը:

1955 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1.—Նորընտիր Կաթողիկոսի անդրանիկ կոն-

դակը՝ համազգային-եկեղեցական վերակառուցում սկսելու և հոգևոր-մշակութային կյանքին զարկ տալու մասին:

1956 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 6.—Մայր Աթոռ է ժամանում հնդիկ ականավոր գրող, Խաղաղության Համաշխարհային խորհրդի անդամ Կրիշնան Չանդրը և արժանանում Հայրապետական ընդունելության:

1956 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 1.—Ուղևորություն Անթիլիաս-Լիբանան, մասնակցելու Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսի ընտրությանն ու Օծմանը: Ապա Հայրապետական այցելություն Անթիլիասի, Կահիրեի, Հռոմի, Միլանի, Վենետիկի, Լոնդոնի, Փարիզի և Մանչեստրի հայ եկեղեցիներին: Վերադարձին, մայիսի 12-ին, վաթսուն րոպե տևող պաշտոնական ընդունելություն ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Բուլգանինի մոտ, որին ներկայացվում է յոթ կետից բաղկացած հուշագիր: Ժամանում Մայր Աթոռ՝ մայիսի 19-ին:

1956 թ. ՄԱՐՏԻ 5.—Կահիրեում, Տ. Տ. Վազգեն Կաթողիկոսի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Կահիրեի եպիսկոպոսական ժողովը, որը քննարկում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսական ընտրության հարցը: Ավարտ՝ մարտի 8-ին:

1956 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6.—Հայրապետական ցավակցական հեռագիր Հայաստանի Գրողների միության անդամ, ակադեմիկոս, ՀՍՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Դերենիկ Կարապետի Դեմիրճյանի մահվան առթիվ:

1957 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 23.—Ի կատարումն Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ա. Բուլգանինի կարգադրության, Վեհարանի նոր շենքը հանձնվում է ի տնօրինություն Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսին:

1957 թ. ՄԱՅԻՍԻ 17.—Հովվապետական այցելություն Նոր-Նախիջևանի և Հյուսիսային Կովկասի հայկական եկեղեցիներին: Վերադարձ՝ մայիսի 21-ին:

1957 թ. ՀՈՒԼԻՍԻ 5.—Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Մելքիսեդեկ Գ.-ի հրավերով՝ այցելություն Թբիլիսի: Վերադարձ՝ հուլիսի 11-ին:

1957 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14.—Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի, Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Մելքիսեդեկ Գ.-ի և Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարքի ներկայացուցիչ, Միտրոպոլիտ Սերգեյի համատեղ խաղաղության կոչը պատերազմները կանխելու, ատոմային և ջրածնային զենքը արգելելու մասին:

1957 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18.—Ցավակցական հեռագիր հայ գրականության դասական, ակադեմիկոս, ՍՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր, Ավետիք Սահակի Իսահակյանի մահվան առթիվ: Հոկտեմբերի 21-ին, մեկնում Երևան, ի այցելություն Վարպետի աճյունին, հոկտեմբերի 22-ին, հանդիսավոր Պատարագ Մայր Աթոռում, ի հանգիստ հոգվո հանգուցյալի:

1957 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20.—Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի Հայրապետական կոնդակը. «Անթիլիասի ոտնձգությանց» առթիվ:

1958 թ. ՄԱՅԻՍԻ 9.—Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի հրավերով, ուղևորություն Մոսկվա, Ռուսական Պրավոսլավ Եկեղեցու պատրիարքության վերահաստատման 40-ամյակի հանդիսություններին մասնակցելու համար: Վերադարձ՝ մայիսի 22-ին:

1958 թ. ՀՈՒԼԻՍԻ 15.—Հայրապետական Ուղերձ Ստոկհոլմի Խաղաղության Համաշխարհային կոնգրեսին, ազգերի խաղաղ գոյակցությունն ու ճշմարիտ բարեկամությունը ամրապնդելու մասին:

1958 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11—24.—Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայ-

ուգույն Պատրիարք Տ. Տ. Վազգեն Ա.-ի ծննդյան հիսունամյակի և գահակալության երրորդ տարեդարձի հանդիսավոր նշումը Մայր Աթոռում:

1959 թ. ԱՊՐԻԼԻ 11.—Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Առաքելական եկեղեցու Սահմանադրության նախագիծը քննող ժողովը: Աշխատանքների ավարտ՝ ապրիլի 13-ին:

1959 թ. ՄԱՅԻՍԻ 24.—Խաղաղության պաշտպանության Խորհրդային Կոմիտեի հրավերով, ուղևորություն Մոսկվա, Կոմիտեի ընդլայնված նիստին մասնակցելու համար: **Մայիսի 26-ին**, Հայրապետական ելույթ Մոսկվայում, **հունիսի 8-ին**, վերադարձ Մայր Աթոռ:

1959 թ. ՀՈՒՆԻՍ.—Խաղաղության պաշտպանության գործին նատուցած անձնվեր ծառայությունների համար, պարգևատրվում է «Խաղաղության պաշտպանության» շքանշանով:

1959 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ.—Հայրապետական ուղերձ ՍՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Ն. Ս. Խրուշչովին և ԱՄՆ-ի պրեզիդենտ Դ. Էյզենհաուերին, հօգուտ խաղաղության և ժողովուրդների միջև կայուն բարեկամության հաստատման:

1959 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12.—Վազգեն Ա. Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար, դոկտ. Վիլիամ Վիսերդ Հուֆտը: Մեկնում՝ դեկտեմբերի 14-ին:

1960 թ. ՄԱՅԻՍԻ 20.—Հայրապետական ուղևորություն Հյուսիսային և Հարավային Ամերիկա, ապա Ֆրանսիա՝ ի այցելություն ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Բրազիլիայի, Ուրուգվայի և Փարիզի հայկական թեմերին ու եկեղեցիներին: **Հունիսի 10-ին**, Վաշինգտոնում, այցելություն քաղաքագլուխ Ռոբերտ Մեկլատոնին, **հունիսի 24-ին**՝ Տորոնտոյի (Կանադա) նահանգապետին, **օգոստոսի 28-ին** Բրազիլիայում՝ Հանրապետության նախագահ Գուբիշեկին, **սեպտեմբերի 9-ին** Լիսաբոնում (Պորտուգալիա)՝ վարչապետ Անտոնիո Օլվիերա Սալազարին, **սեպտեմբերի 17-ին** Փարիզում՝ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Կուվ դե Մուրվիլին: **Հոկտեմբերի 8-ին**, վերադարձ Մայր Աթոռ:

1960 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27.—Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ են ժամանում Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսին և Համայն վրաց պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ.-ն:

1960 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 29.—Մայր Աթոռում, Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի է ունենում հոգևոր հանդիսություն, նվիրված Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման քառասնամյակին:

1961 թ. ՄԱՅԻՍԻ 7.—Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ են ժամանում Հեսսեն-Նասաու նահանգի (ԳՖՀ) Ավետարանական-Լութերական եկեղեցու նախագահ, դոկտ. Մարտին Նիմյուլլերը և Ավագ Խորհրդատու, հայր դոկտ. Մանֆրեդ Կրյուզերը: Մեկնում՝ մայիսի 9-ին:

1961 թ. ՀՈՒՆԻՍԻ 13.—Ուղևորություն Պրագա, Խաղաղության պաշտպանության համաքրիստոնեական առաջին կոնգրեսին մասնակցելու համար: **Հունիսի 14-ին**, ելույթ Կոնգրեսում «Խաղաղություն և քրիստոնեական արդարություն» թեմայով, վերադարձ՝ հունիսի 18-ին:

1961 թ. ՀՈՒԼԻՍԻ 4.—Ուղևորություն Կ. Պոլիս, նախագահելու Պատրիարք Տ. Գարեգին Խաչատրյանի թաղման արարողություններին: **Հուլիսի 18-ին**, Անկարայում, հանդիպում Թուրքիայի Հանրապետության նախագահ Ջեմալ Գյուրսելին, ապա այցելություն Վիեննայի հայկական համայնքին: **Հուլիսի 27-ին**, վերադարձ:

1961 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15.—Մայր Աթոռի նորաշեն տպարանի բացման արարողությունը, Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ:

1961 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8.—Հայրապետական հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ.-ն: Մեկնում՝ դեկտեմբերի 11-ին:

1962 թ. ՀՈՒՆԻՍԻ 16.—Հովվապետական այցելություն Ադրբեջանի հայոց թեմին, հունիսի 17-ին, հանդիպում տեղական կառավարության և հոգևոր բարձրագույն իշխանության ներկայացուցիչների հետ: Վերադարձ՝ հունիսի 19-ին:

1962 թ. ՀՈՒԼԻՍԻ 9.—Մասնակցություն Մոսկվայում բացված՝ Ընդհանուր զինաթափման և խաղաղության համաշխարհային կոնգրեսին, հուլիսի 14-ին, ելույթ «Աստված սեր է, և խաղաղությունն աստված է» թեմայով: Վերադարձ՝ հուլիսի 14-ին:

1962 թ. ՀՈՒԼԻՍ.—Մասնագիտական վերանորոգումից հետո՝ նոր Վեհարանի շենքի հանդիսավոր բացումը: Վեհափառ Հայրապետը հին Վեհարանի շենքից փոխադրվում է նոր Վեհարան:

1962 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 30.—Մայր Աթոռում, Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Ազգային-Եկեղեցական սրբագումար Ժողովը, որն ավարտվում է հոկտեմբերի 8-ին, «Խաղաղության բանաձևի» ընդունումով:

1963 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 19.—Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ընտրվում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդի անդամ, ըստ դիմումի Ծայրագույն Պատրիարք և Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա.-ի:

1963 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25.—Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին: Մեկնում՝ սեպտեմբերի 27-ին:

1963 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2.—Հովվապետական այցելություն Երուսաղեմի հայոց պատրիարքությանը և Եգիպտոսի ու Հնդկաստանի հայոց թեմերին: Վերադարձ Մայր Աթոռ՝ դեկտեմբերի 26-ին:

1964 թ. ՕԳՈՍՏՈՍԻ 17.—Ամենայն Հայոց Հայրապետի Կոնդակը ապրիլյան Եղեռնի հիսնամյակի առթիվ: Տրվում են հրահանգներ, այդ սգատոնը հավերժացնելու մասին:

1964 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24.—Վազգեն Ա. Կաթողիկոսի ուղերձը Կաթոլիկ եկեղեցու քահանայապետ Պողոս Զ. Պապին, Համայն Ռուսիո Պատրիարք Տ. Տ. Ալեքսիին, Քենտրբերիի արքեպիսկոպոս Մայքլ Ռեմզիին և Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Վիսերդ Հուֆտին, ապրիլի 24-ին կայանալիք եղեռնի սգատոնին իրենց հոգևոր մասնակցությունը բերելու մասին:

1965 թ. ՀՈՒՆԻՍԻ 12.—Ուղևորություն արտասահման, Ադիս-Աբեբայում (Եթովպիա) գումարվելիք Արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պետերի համաժողովին մասնակցելու համար, ապա այցելություն Կահիրեի, Փարիզի, Լոնդոնի հայկական համայնքներին: Հունվարի 20-ին, Ադիս-Աբեբայում, այցելություն Եթովպիայի կայսր Հայլե Սելասիե Ա.-ին, հունվարի 25-ին, Կայսեր փոխայցելությունը Վեհափառ Հայրապետին: Փետրվարի 10-ին, Լոնդոնում, Հայրապետական այցելություն Քենտրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Մայքլ Ռեմզիին: Վերադարձ Մայր Աթոռ՝ փետրվարի 20-ին:

1965 թ. ԱՊՐԻԼԻ 24.—Վազգեն Ա. Կաթողիկոսի «Խոսք աղոթքի և ուխ-

տի» խորագիրը կրող ուղերձը Ապրիլյան եղեռնի հիսնամյա սգատոնի առթիվ:

1965 թ. ՀՈՒԼԻՍԻ 10.—Ուղևորություն Հելսինկի, խաղաղության և ընդհանուր զինաթափման համաշխարհային համաժողովին մասնակցելու համար: Հուլիսի 12-ին, ելույթ համաժողովում, վերադարձ՝ հուլիսի 17-ին:

1965 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28.—Ապրիլյան եղեռնի հիսնամյակի և Վեհափառ Հայրապետի գահակալության տասներորդ տարեդարձի առթիվ հանդիսություններ Մայր Աթոռում: Քույր եկեղեցիների անունից հանդես են գալիս Համայն Վրաց Կաթողիկոս-Պատրիարք Եփրեմ Բ.-ն, Հայ կաթողիկե պատրիարք Իգնատիոս-Պետրոս Պաթուլյանը, Հաբեշական եկեղեցու ներկայացուցիչ Աբունա Պետրոս Միտրոպոլիտը և ուրիշներ: Հոկտեմբերի 31-ին, հավարտ պատարագի, Ապրիլյան եղեռնի նահատակների հուշարձանի բացումը Մայր Աթոռում: Հանդիսությունների ավարտ՝ նոյեմբերի 9-ին:

1967 թ. ՄԱՐՏԻ 30.—Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտոր Է. Կ. Բլեյկը: Մեկնում՝ մարտի 31-ին:

1967 թ. ԱՊՐԻԼԻ 25.—Հայրապետական այցելություն Մոսկվա; Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիին: Վերադարձ՝ մայիսի 2-ին:

1967 թ. ՀՈՒՆԻՍԻ 2.—Հայրապետական հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Բուլղար Օրթոդոքս եկեղեցու պետ Կիրիլ Պատրիարքը: Մեկնում՝ հունիսի 6-ին:

1967 թ. ՀՈՒԼԻՍԻ 6.—Ուղևորություն Ժնև, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի կենտրոն: Հուլիսի 11-ին, ելույթ, նվիրված միջեկեղեցական հարաբերությունների հարցերին: Վերադարձ՝ օգոստոսի 19-ին:

1967 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21.—Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում հնդիկ Մալաբար եկեղեցու պատգամավորությունը, Հովհաննես Մար-Սեվերիոսի գլխավորությամբ: Մեկնում՝ սեպտեմբերի 24-ին:

1967 թ. ՆՈՅԵՄԲԵՐ.—Վազգեն Ա. Կաթողիկոսի «Հայրապետական խոսքը» Հոկտեմբերյան հեղափոխության հիսնամյակի առթիվ:

1968 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 8.—Ուխտագնացություն Երևան, աղոթելու Ծիծեռնակաբերդի Ապրիլյան եղեռնի նահատակների հուշարձանի առաջ:

1968 թ. ԱՊՐԻԼԻ 16.—Ուղևորություն արտասահման, հովվական այցելություն տալու Ավստրիայի, ԱՄՆ-ի, Կանադայի, Արգենտինայի, Ուրուգվայի, Բրազիլիայի և Ֆրանսիայի հայկական համայնքներին: Ապրիլի 26-ին, Նյու-Յորքում, քաղաքապետ Ջոն Ֆ. Լինզզիի այցելությունը Վեհափառ Հայրապետին, մայիսի 2-ին, պաշտոնական այցելություն ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Ու Տանին: Հուլիսի 11-ին, այցելություն Սան-Պաուլոյի (Բրազիլիա) նահանգապետ Ռոբերտո Աբրեիո Սուդրեին, հուլիսի 22-ին, Փարիզում, Հայրապետական այցելություն քաղաքապետ Բեռնար Ռոշեին: Վերադարձ Մայր Աթոռ, հուլիսի 27-ին:

1968 թ. ՄԱՅԻՍԻ 26.—Վազգեն Ա. Կաթողիկոսի ուղերձը՝ «Նոր ավետիս հայության» խորագրով, Սարդարապատի ճակատամարտի հիսնամյակի առթիվ:

1968 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19.—ՍՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրով, պարգևատրվում է «Պատվո Նշան» շքանշանով:

1968 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24.—Մայր Աթոռ է ժամանում գերմանացի գրող, հրապարակախոս, Արմին Թեոֆիլ Վեգները և արժանանում Հայրապետական ընդունելության:

1969 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 24.—Վազգեն Ա. Կաթողիկոսի կոնդակը հայ երգարվեստի դասական Կոմիտաս վարդապետի (Սողոմոն Գևորգի Սողոմոնյան) ծննդյան 100-ամյակի առթիվ:

1969 թ. ՄԱՅԻՍԻ 17.—Ուղևորություն Վիեննա, Ալեքս Մանուկյանի և Տատուր Տատուրյանի հետ հանդիպելու համար: Վերադարձ՝ մայիսի 24-ին:

1969 թ. ՀՈՒԼԻՍԻ 1.—Ալեքսի Պատրիարքի հրավերով, մեկնում է Զագորսկ, Քրիստոնեական եկեղեցիների և մահմեդական, հրեական ու բուդդայական կրոնական կազմակերպությունների համագումարին մասնակցելու համար: Վերադարձ՝ հուլիսի 4-ին:

1969 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20.—Վազգեն Ա. Կաթողիկոսի ծննդյան վաթսունամյակի առթիվ հանդիսություններ Մայր Աթոռում: Շնորհավորական հեռագրեր ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանից, ՍՍՀՄ Կրոնական գործերի նախագահ Վ. Կուրոեդովից, Նորին Սրբություն Պավղոս Զ. Պապից, Հունաց տիեզերական Պատրիարք Աթենագորասից, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիից, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Եփրեմ Բ.-ից և ուրիշներից:

1969 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27.—Մայր Աթոռում, Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Եպիսկոպոսական ժողովը, որը քննարկում է ներքին-կազմակերպչական բնույթի հարցեր: Ավարտ՝ հոկտեմբերի 2-ին:

1970 թ. ԱՊՐԻԼԻ 20.—Ուղևորություն Մոսկվա, մասնակցելու Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիի թաղման ազահանդեսին: **Ապրիլի 21-ին**, հոգեհանգստի արարողություն հայկական ծեսով, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, վերադարձ ապրիլի 22-ին:

1970 թ. ՄԱՅԻՍԻ 3.—Ուղևորություն Հռոմ, այցելելու Նորին Սրբություն Պավղոս Զ. Պապին, ինչպես նաև Վենետիկի Մխիթարյան վանքին և հայ եկեղեցիներին: Վերադարձ՝ հունիսի 20-ին:

1971 թ. ՄԱՐՏԻ 9.—Հայրապետական ցավակցական հեռագիր Սոֆիա, Բուլղարիայի Տ. Կիրիլ Պատրիարքի մահվան առթիվ:

1971 թ. ՀՈՒՆԻՍԻ 1.—Ուղևորություն Մոսկվա, մասնակցելու Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի ընտրությանը: **Հունիսի 8-ին**, Հայրապետական ողջույնի խոսք, վերադարձ՝ հունիսի 5-ին:

1971 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3.—Մայր Աթոռ է ժամանում Հայ Բարեգործական Ընդհանուր Միության նախագահ Ալեքս Մանուկյանը իր կնոջ՝ Մարի Մանուկյանի հետ, իբրև հյուրը Մայր Աթոռի: Մեկնում հոկտեմբերի 16-ին:

1972 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 1.—Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ է ժամանում Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար, դոկտ. Էժեն Կարսոն Բլեյկը: Մեկնում՝ փետրվարի 4-ին:

1972 թ. ԱՊՐԻԼԻ 11.—Ուղևորություն Թբիլիսի, Համայն Վրաց Պատրիարք-Կաթողիկոս Եփրեմ Բ.-ի թաղման ազահանդեսին մասնակցելու համար: **Ապրիլի 13-ին**, Հայրապետական դամբանական խոսք, վերադարձ՝ ապրիլի 14-ին:

1972 թ. ՄԱՅԻՍԻ 10.—Հայրապետական ցավակցական կոնդակ ՍՍՀՄ Ժողովրդական նկարիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս, ակադեմիկոս Մարտիրոս Սարյանի մահվան առթիվ:

1972 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9.—Վեհափառ Հայրապետի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում ղպտական ուղղափառ եկեղեցու հովվապետ, Նորին Սրբություն Շենուդա Գ.-ն: Մեկնում՝ հոկտեմբերի 12-ին:

1972 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 10.—Վեհափառ Հայրապետի հրավերով Մայր Աթոռ այցի է գալիս Մոսկվայի և Համայն Ռուսիոյ պատրիարք Պիմենը: Նոյեմբերի 12-ին, Հայրապետական հանդիսավոր պատարագ Մայր Աթոռում, Ն. Ս. Պիմեն Պատրիարքի: Մեկնում՝ նոյեմբերի 14-ին:

1973 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 16.—Վազգեն Ա. Կաթողիկոսի կոնդակը Ներսես Շնորհալու մահվան 800 ամյակի առթիվ: 1973 թվականը հայտարարվում է հոբելյանական տարի:

1973 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25.—Վեհափառ Հայրապետը մեկնում է Մոսկվա, Խաղաղության Համաշխարհային համաժողովին մասնակցելու համար· Հոկտեմբերի 29-ին, Հայրապետական ելույթ (ֆրանսերեն): Վերադարձ՝ նոյեմբերի 3-ին:

1974 թ. ԱՊՐԻԼԻ 4.—Ցավակցական հեռագիր Փարիզ, Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Ժորժ Պոմպիդուի մահվան առթիվ:

1974 թ. ՄԱՅԻՍԻ 10.—Վազգեն Ա. Կաթողիկոսի հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Բուլղարական Օրթոդոքս եկեղեցու հովվապետ Տ. Մաքսիմ Պատրիարքը: Մեկնում Մայր Աթոռից՝ մայիսի 15-ին:

1974 թ. ՀՈՒԼԻՍԻ 16.—Համայն Ռուսիոյ Պատրիարք Պիմենի հրավերով, Վեհափառ Հայրապետը պաշտոնական այցելություն է տալիս Ռուս Պրավոսլավ եկեղեցուն Մոսկվայում, ապա Կիեւում: Վերադարձ՝ հուլիսի 25-ին:

1974 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29.—Վազգեն Կաթողիկոսի նախագահությամբ, տեղի է ունենում Ղազարապատի վերակառուցված շենքի հանդիսավոր բացումը:

1974 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 19.—Հայրապետական հրավերով Մայր Աթոռ է ժամանում Ալեքսանդրիայի և համայն Աֆրիկայի հունաց Պապ և Պատրիարք Նիկոլաուս Զ.-ն: Նոյեմբերի 25-ին, Աշխարհի խաղաղության պաշտպանության կոչի համատեղ ստորագրում, մեկնում՝ նոյեմբերի 26-ին:

1974 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12.—Հայրապետական ողջույնի գիր դոկտոր-պրոֆեսոր Վազգեն Արտաշեսի Հակոբյանին, «Մեսրոպ Մաշտոցյան մրցանակի դափնեկրի» տիտղոս ստանալու առթիվ:

1975 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 24.—Վազգեն Ա. Կաթողիկոսի նախաձեռնությամբ, Մայր Աթոռում, իր աշխատանքներն է սկսում Խաղաղության Համաքրիստոնեական Կոնֆերանսի Միջազգային քարտուղարության առաջին նստաշրջանը: Աշխատանքների ավարտ՝ փետրվարի 28-ին:

1975 թ. ՄԱՅԻՍԻ 1.—Հայրապետական ուղևորություն արտասահման, Ռումինիայի, Բուլղարիայի, Լոնդոնի, Փարիզի, Ամմանի և Երուսաղեմի հայ հավատացյալներին այցելելու համար: Հունիսի 21-ին, Ամմանում, այցելություն Հորդանանի գահաժառանգ Նորին Բարձրություն Հասան իշխանին, վերադարձ՝ հուլիսի 8-ին:

1975 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16.—Հայրապետական հրավերով, Մայր Աթոռում, իր աշխատանքային գործունեությունն է սկսում Օրթոդոքս եկեղեցիների ներկայացուցիչների խորհրդակցությունը, որն ավարտում է իր աշխատանքները սեպտեմբերի 21-ին:

1975 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 9.—Հոբելյանական հանդիսություն Մայր Աթոռում, նվիրված հայ գրականության դասական Ավետիք Իսահակյանի ծննդյան հարյուրամյակին:

1976 թ. ՀՈՒՆԻՍԻ 26.—Հայրապետական այցելություն Փարիզի և Ժնևի հայ հավատացյալներին: Վերադարձ՝ հուլիսի 14-ին:

1976 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25.—Մեռոնի օրհնության և Վազգեն Ա. Կաթողիկոսի գահակալության քսանամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում: Ավարտ՝ հոկտեմբերի 5-ին:

1976 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27.— Մայր Աթոռ է ժամանում ամերիկահայ արձակագիր Վիլիամ Սարոյանը և արժանանում Հայրապետական ընդունելության:

1977 թ. ՄԱՐՏԻ 29.—Ուղևորություն Բուխարեստ, Ռումին Օրթոդոքս եկեղեցու պատրիարք Ժուստինյանի մահվան սգահանդեսին մասնակցելու համար: Վերադարձ՝ ապրիլի 4-ին:

1977 թ. ՀՈՒՆԻՍԻ 4.—Ուղևորություն Մոսկվա, Կրոնական գործիչների Համաշխարհային համաժողովին մասնակցելու համար: Հունիսի 6-ին, Հայրապետական ելույթ համաժողովում, «Խոսք խաղաղության» թեմայով, վերադարձ՝ հունիսի 11-ին:

1977 թ. ՀՈՒԼԻՍԻ 20.—Մայր Աթոռ է ժամանում ԱՄՆ-ի եպիսկոպոսական եկեղեցու պատվիրակությունը, Ջոն Մ. Ալինի գլխավորությամբ:

1977 թ. ՕԳՈՍՏՈՍԻ 29.—Հայրապետական Կոնդակ՝ Կ. Պոլսո Հայոց Հովհաննես Կոլոտ Պատրիարքի ծննդյան 300-ամյակին նվիրված:

1977 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29.—Մայր Աթոռ է ժամանում Քենտրբերիի արքեպիսկոպոս, դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանը, իբրև հյուրը Վեհափառ Հայրապետի:

1977 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 14.—Ուղևորություն Թբիլիսի, Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Տ. Դավիթ Ե.-ի թաղումին մասնակցելու համար: Դամբանական խոսք՝ նոյեմբերի 15-ին, վերադարձ՝ նոյեմբերի 16-ին:

1977 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10.—Ողջույնի գիր Մարշալ Հովհաննես Քրիստոփորի Բաղրամյանին, նրա ծննդյան 80-ամյակի առթիվ:

1977 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13.—Ուղևորություն Զագորսկ, Խորհրդային Միության եկեղեցիների և կրոնական այլ համայնքների ներկայացուցիչների ժողովին մասնակցելու համար: Դեկտեմբերի 14-ին, ելույթ «Ընդդեմ նեյտրոնային ռումբի արտադրության ու գործադրման», վերադարձ՝ դեկտեմբերի 15-ին:

1978 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 28.—Հովվապետական այցելություն Իրլանդիա և Փարիզի հայկական թեմերին: Փետրվարի 16-ին, Փարիզում, Հայրապետական այցելություն Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Լուի դը Կիրենկոյին, վերադարձ՝-փետրվարի 21-ին:

1978 թ. ՄԱՅԻՍԻ 19.—Հայրապետական հրավերով, Մայր Աթոռ է ժամանում Եթովպիայի Ուղղափառ եկեղեցու Պատրիարք Աբբա Թեքլե Հայմանոթը: Մայիսի 22-ին, խաղաղության կոչի համատեղ ստորագրում, նույն օրը, Պատրիարքի մեկնում Մայր Աթոռից:

1978 թ. ՄԱՅԻՍԻ 24.—Ուղևորություն Մոսկվա, Ռուս Պրավոսլավ եկեղեցու Պատրիարքության վերահաստատման 60-ամյակին մասնակցելու համար: Մայիսի 26-ին, Հայրապետական ելույթ, վերադարձ՝ մայիսի 29-ին:

1978 թ. ՀՈՒՆԻՍԻ 9.—Ուղևորություն Լոնդոն, ապա Ժնև, Եկեղեցիների Համաշխարհային խորհրդի կենտրոնի աշխատանքներին մասակցելու համար: Հունիսի 21-ին, Հայրապետական ելույթ Ժնևում, հունիսի 22-ին, այցելություն Ժնևի քաղաքապետ Պիեռ Ռեզենին: Վերադարձ՝ հունիսի 29-ին:

1978 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19.—Խաղաղության պաշտպանության գործին մատուցած ծառայության համար և ծննդյան 70-ամյակի առթիվ, Վեհափառ

Հայրապետը պարգևատրվում է «Ժողովուրդների բարեկամության» շքանշանով:

1978 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 2.—Հայրապետական ուղերձ Վիլիամ Սարոյանին, նրա ծննդյան յոթանասունամյակի առթիվ:

1979 թ. ԱՊՐԻԼԻ 12.—Վազգեն Ա. Կաթողիկոսի «Ծանուցումը»՝ Ս. Հռիփսիմե վանքում գտնված Հռիփսիմյանց կույսերի աճյունների և նրանց պատմա-քրիստոնեական նշանակության մասին:

1979 թ. ՄԱՅԻՍԻ 1.—Այցելություն Ֆրանսիա՝ Փարիզի, Բորդոյի, Նիցցայի, Լիոնի, Սենտ-Էտիենի, Վալանսի և Դեսինի հայկական համայնքներին: Վերադարձ՝ հունիսի 13-ին:

1979 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 9.—Հայրապետական Կոնդակ ֆրանսահայ ընկուրիչ Գարզուին (Գառնիկ Հարությունի Զուլումյան), և «Ս. Սահակ—Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրում:

1980 թ. ԱՊՐԻԼԻ 11.—Ուղևորություն Վրաստան, նրավերովը Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ.-ի: Վերադարձ՝ ապրիլի 15-ին:

1980 թ. ՄԱՅԻՍԻ 22.—Հայրապետական Կոնդակ, Հայաստանում Խորհրդային կարգերի հաստատման վեցամյակի առթիվ:

1980 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 28.—Վազգեն Ա. Կաթողիկոսի գահակալության քսանհինգամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում:

1980 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 24.—Երևանում տեղի է ունենում Հայրենի երկրի հասարակության և սիյոնքահայության համատեղ ժողով, որին իր Հայրապետական մասնակցությունն էր բերում Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսը: Աշխատանքների ավարտ՝ նոյեմբերի 25-ին:

1981 թ. ԱՊՐԻԼԻ 22.—Ուղևորություն արտասահման, այցելություն Վիեննայի, Մյունխենի, Մայնի Ֆրանկֆուրտի և Փարիզի հայկական համայնքներին: Վերադարձ՝ մայիսի 2-ին:

1981 թ. ՀՈՒՆԻՍԻ 1.—Ուղևորություն Զագորսկ, Խորհրդային Միության եկեղեցիների և կրոնական համայնքների ղեկավարների ժողովին մասնակցելու համար: Նույն օրը՝ Հայրապետական ելույթ Զագորսկում և Խաղաղության կոչի ստորագրում: Վերադարձ՝ հունիսի 2-ին:

1981 թ. ՀՈՒՆԻՍԻ 24.—Հայրապետական Կոնդակ Կ. Պոլսո Հայոց Հակոբ Նալյան պատրիարքի ծննդյան 250-ամյակի առթիվ:

1981 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 22.—Մայր Աթոռում, Վազգեն Կաթողիկոսի նախագահությամբ, իր աշխատանքներն է սկսում Հայ եկեղեցու սահմանադրության նոր նախագծի կազմության հանձնաժողովը: Աշխատանքների ավարտ՝ հոկտեմբերի 29-ին:

1982 թ. ՄԱՐՏԻ 15.—Հայրապետական ցավակցական գիր Մատենադարանի տնօրեն, գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Լևոն Ստեփանի Խաչիկյանի մահվան առթիվ:

1982 թ. ՄԱՅԻՍԻ 10.—Ուղևորություն Մոսկվա, Խաղաղության պաշտպանության կրոնական գործիչների համաշխարհային համագումարին մասնակցելու համար: Նույն օրը՝ ելույթ համագումարում (ֆրանսերեն), վերադարձ՝ մայիսի 15-ին:

1982 թ. ՀՈՒՆԻՍԻ 7.—Վազգեն Կաթողիկոսի ողջույնի և օրհնության հեռագիրը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարին, Գլխավոր ասամբլեայի զինաթափման նստաշրջանի բացման առթիվ:

1982 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 23.—Հայրապետական ցավակցական հեռագիր

Սովետական Միության մարշալ, Սովետական Միության հերոս Հովհաննես Քրիստուփորի (Խաչատուրի) Բաղրամյանի մահվան առթիվ:

1983 թ. ՄԱՅԻՍԻ 3.—Ուղևորություն Լոնդոն և Փարիզ, տեղի հայկական համայնքներին այցելելու համար: Վերադարձ՝ հունիսի 4-ին:

1983 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29.—Ծննդյան 75-ամյակի առթիվ և խաղաղության պաշտպանության գործում մատուցած անձնվեր ծառայության համար, պարգևատրվում է ՀՍՍՀ Գերագույն Խորհրդի նախագահության պատվոգրով:

1983 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10.—Հայրապետական Կոնդակ Ֆրանսիացի հայագետ Ֆրեդերիկ Ֆեյդիին, և «Ս. Սահակ և Ս. Մեսրոպ» շքանշանով պարգևատրում:

1984 թ. ՄԱՐՏԻ 16.—Ցավակցական խոսք բանաստեղծ Հովհաննես Շիրազի (Հովհաննես Թադևոսի Կարապետյան) մահվան առթիվ:

1984 թ. ԱՊՐԻԼԻ 25.—Հովվապետական այցելություն Արգենտինայի, Բրազիլիայի և Ուրուգվայի հայկական թեմերին: Վերադարձ՝ հունիսի 19-ին:

1985 թ. ՀՈՒՆՎԱՐԻ 3.—Հայրապետական Կոնդակ Խորհրդային Միության՝ Հայրենական Մեծ Պատերազմի ավարտի քառասունամյակի առթիվ:

1985 թ. ԱՊՐԻԼԻ 16.—Ուղևորություն Մոսկվա, ՍՍՀՄ Եկեղեցական և Կրոնական հարաբերությունների պետերի և ներկայացուցիչների համաժողովին մասնակցելու համար: Ապրիլի 18-ին, ելույթ Զագորսկում, նվիրված Հայրենական Մեծ պատերազմի ավարտի 40-ամյակին, վերադարձ Մայր Աթոռ՝ ապրիլի 20-ին:

1985 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 25.—Վազգեն Ա. Կաթողիկոսի գահակալության երեսնամյակին նվիրված հանդիսություններ Մայր Աթոռում:

1985 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24.—Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստը՝ Վազգեն Ա. Կաթողիկոսի նախագահությամբ, Վենետիկի Մխիթարյան միաբանությանը, տարերային աղետի՝ ջրհեղեղի հետևանքով պատճառված վնասներին ի օգնություն 25 000 դոլլար տրամադրելու մասին:

1986 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10.—Հայրապետական Կոնդակ Հալլեի (ԳԴՀ) համալսարանի տնօրինությանը, գերմանացի արևելագետ, հայապահպան գործիչ Հովհաննես Լեփսիուսի ծննդյան 60-ամյակը նշելու առթիվ:

1986 թ. ԱՊՐԻԼԻ 4.—Ոչ-պաշտոնական այցելություն Փարիզ, հայկական համայնքի հետ կապված հարցերի առթիվ: Վերադարձ՝ ապրիլի 22-ին:

1986 թ. ՄԱՅԻՍԻ 21.—Վազգեն Կաթողիկոսի ցանվակցական հեռագիրը Ա. Ա. Գրոմիկոյին, Չերնոբիլում պատահած վթարի առթիվ: Մայր Աթոռը տրամադրում է 150 000 ռուբլի, աղետյալների օգտին:

1986 թ. ՀՈՒԼԻՍԻ 14.—Վազգեն Ա. Կաթողիկոսի նամակը Ամերիկայի պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանին, միջուկային պատերազմի արգելման, ընդհանուր զինաթափման, աշխարհում խաղաղ գոյակցությունը հաստատելու մասին:

1986 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 17.—Ուղևորություն Զագորսկ, Խորհրդային Միությունում գործող եկեղեցիների ու կրոնական հարաբերությունների պետերի և ներկայացուցիչների երկրորդ հավաքին մասնակցելու համար (Տե՛ս 1985 թ. ապրիլի 16): Հայրապետական ելույթ՝ նոյեմբերի 18-ին, վերադարձ Մայր Աթոռ՝ նոյեմբերի 20-ին:

1987 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 10.—Ցավակցական հեռագիր Համայն Վրաստանի Պատրիարք-Կաթողիկոս Իլիա Բ.-ին, Վրացական ՍՍՀ-ում պատահած տա-

րերային աղետի վերաբերյալ: Որոշվում է, որ Մայր Աթոռը աղետյալներին օգնելու համար տրամադրի 100 000 ռուբլի:

1987 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 14.—Ուղևորություն Մոսկվա, «Հանուն միջուկազերծ աշխարհի, հանուն մարդու վերապրումի» կարգախոսով համաժողովին մասնակցելու համար: Հայրապետական ելույթ՝ փետրվարի 15-ին, վերադարձ Մայր Աթոռ՝ փետրվարի 18-ին:

1987 թ. ՀՈՒՆԻՍԻ 12.—Մայր Աթոռում, Վազգեն Ա. Կաթողիկոսի բացման խոսքով, իր աշխատանքներն է սկսում Խաղաղության քրիստոնեական կոնֆերանսի «Մերձավոր արևելք» ենթա-հանձնաժողովի տարեկան նստաշրջանը: Աշխատանքների ավարտ՝ հունիսի 16-ին:

1987 թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5.—Հայրապետական այցելություն Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Կանադա: Հոկտեմբերի 22-ին, Ելույթ ՄԱԿ-ում (Նյու-Յորք), դեսպանների հետ հանդիպման ժամանակ, հոկտեմբերի 26-ին, Վաշինգտոնում, հանդիպում ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանի հետ: Վերադարձ՝ նոյեմբերի 28-ին:

ՍՈՒՐԵՆ Ծ. ՎԱՆԵՑԻ